
**ՀԱՅԵՐԵՆԻ, ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԱՅԼ ԵՎ
ՖԻՆԱՆՍՈՒԳՐԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀՈԳՆԱԿԵՐՏ
ԿԱԶՄԻՉՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ**

ՆԻԿՈՂՈՍՅԱՆ Գ. Վ.

Հնդեվրոպական և ֆիննաուգրական (նաև ուրալյան) լեզուների քերականական ընդհանրությունների համեմատական ուսումնասիրությունը մի քանի տասնամյակի պատմություն ունի: Այդ զուգադիպումները բավական շատ են և վաղուց արդեն պատահական չեն համարվում:

Առաջին անգամ տարբեր լեզվաընտանիքների պատկանող լեզուների քերականական կազմիչների համեմատությանն անդրադարձել է իտալացի լեզվաբան Ա. Տրոմբետին՝ փորձելով ապացուցել նրանց միասնական ծագումը: Հետագայում այս գաղափարը զարգացում գտավ նոստրատիկ լեզվաբանության խորհրդային դպրոցի հիմնադիր Վ. Բլիչ-Սվիտչի աշխատանքներում: Տարբեր լեզվաընտանիքների քերականական կազմիչների համեմատական ուսումնասիրությամբ ներկայումս զբաղվում են Ա. Բոմհարդը, Ա. Դոլգոպոլսկին և այլք:

Հիմնավորելով նոստրատիկ մակրոընտանիքի գոյությունը՝ Ա. Բոմհարդն իր աշխատություններում ներկայացնում է երեք հիմնական փաստարկ. ա) ժառանգ լեզուներն ունեն բավական ընդարձակ ընդհանուր բառապաշար, բ) նոստրատիկ լեզուներում նկատելի են որոշակի հնչյունական համապատասխանություններ, գ) կան մեծ թվով ընդհանուր քերականական կազմիչներ²:

Հայերենի, հ.-ե. այլ և ֆ.-ուգր. մի շարք լեզուների հոգնակի թվի կազմիչների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն հայ-ֆիննաուգրական քերականական այնպիսի ընդհանրություններ, որոնք՝ ա) հ.-ե. մյուս լեզուներում հայտնաբերված չեն, բ) բացի հայերենից, կան նաև հ.-ե. այլ լեզուներում, սակայն առանց հայերենի տվյալների դրանց համեմատական քննությունը լիարժեք չէ:

Հոգնակի թվի կազմության մասին խոսելիս առաջին հերթին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ հայերենի հին ու նոր շրջանի տվյալները՝ ներառյալ բարբառները, խիստ բազմազան են: Հայերենի հոգնակի թվի կազմությանն անդրադարձել են բազմաթիվ լեզվաբաններ: Գ. Ջահուկյանը հայերենի հոգնակերտ կազմիչները բաժանում է երկու խմբի՝ ա) –ք-ով բաղադրված մասնիկներ՝ –այք, –եայք (աղախնայք), –անք (նու–

¹ **Иллич - Свитыч В. М.** Опыт сравнения ностратических языков, т. 1-3, М., 1971-1984.

² **Bomhard A. R.** Recent Træal Academy of Sciences, vol. 2, # 4, 2008, p. 148-149 [<http://www.science.org.ge/2-4/Bomhard.pdf>].

նուանք), –իք (արմատիք, պարտիք), –ինք (գահինք), –ոյք (գահոյք, հասոյք), –ունք (անդամունք), բ) այլ հոգնակերտ մասնիկներ՝ –ան (ձիան, խուժան, թիան), –անի (ագատանի, ավագանի), –եան (բերդեան, զիւղեան), –եար (բանեար, վանեար, որեար), –իկ (մարդիկ), –ական (գօրական, փախստական), –նեար (նաւկնեար), –որայ, –որեայ (արտ–արտորայ, վան–ք – վանորայ), –տի, –ոտի (մանկտի, ոսկրոտի, փորոտի), –ուի (աչուի, իշուի), միջ. հայ.՝ –ստան (այգեստան, անդաստան)³:

Առաջին խմբի՝ ք-ով կազմված հոգնակերտը լեզվաբանները բնիկ են համարում: Հնդեվրոպաբանության մեջ կարծիք կա, թե ք- մասնիկը ծագում է հ.-ե. s-ից կամ sw-ից: Հ. Հյուբշմանը կասկածի է ենթարկել ընդունված՝ s>k հնչյունափոխության հնարավորությունը, քանի որ բառավերջի շեշտահաջորդ վանկերը սովորաբար ընկնում են⁴: Հ. Ասմանգուլյանը եկել է այն եզրակացության, որ ք-ն ոչ հ.-ե. լեզուներից հայերենին անցած մասնիկ է, այսինքն՝ նա անհավանական է համարել s > k կամ sw > k հնչյունափոխությունը⁵:

Ան/եան և –ստան հոգնակերտների համար ենթադրվում է իրանական ծագում, իսկ –անի/–նի մասնիկը, ըստ Գ. Ջահուկյանի, կարող էր ծագել ան+ի հավելմամբ: Ոմանք նի հոգնակերտը կապում են կովկասյան –նի մասնիկի հետ:

Հ. Աճառյանը հայերենի հոգնակերտ մասնիկները համեմատել է հ.-ե. և ոչ հ.-ե. լեզուների հոգնակերտ մասնիկների հետ: Նա պատահական է համարել հայերենի –եր (<–եար) հոգնակերտի նմանությունը էտրուսկերենի (–er, –ar), տունգուսերենի (–r), մոնղոլերենի (–nar, –ner) համարժեք մասնիկներին և հղում է կատարում Բուզեին, որը հայերենի –եար-ը համարում է փոխառություն կովկասյան լեզուներից (չեչեն. ar, er, ir, թուշ. ar, ուտ. ur)⁶: Մակայն ակնհայտ է այս կազմիչի նմանությունը գերմանական –er մասնիկին, որը չի ընդունվում, քանի որ վերջինս ռոտացիզմի հետևանքով հ.-ե. –s հոգնակերտ մասնիկից է առաջացած համարվում:

Հայերենի և հ.-ե. լեզուների հոգնակերտ մասնիկների նմանությունը ևս նա համարել է պատահական: Հայերենի –եր/–եար հոգնակերտի և գերմանական լեզուների համարժեք հոգնակերտ մասնիկների նմանությունից բացի (s>r անցումը տվյալ դեպքում ուղղակի ենթադրություն է), գերմանական լեզուներում գոյություն ունեն նաև հայերենի –ան/–անի/–ենի/–նի հոգնակերտին համարժեք վերջավորություններ, օրինակ՝ իսլ. egg – eggjar, tunga – tungur, չվեդ. dag – dagar, bok – böker, նորվ. dag – dager, bok – bøker, fot – føtter, գերմ.

³ Ջահուկյան Գ., Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը, Ե., 1959, էջ 86-87:

⁴ Նույն տեղում, էջ 219:

⁵ Асмангулян А. Против гипотезы о “двуприродности” армянского языка, [Вопросы языкознания (այստիեւոն՝ ВЯ), 1953, N 6, с. 34-35].

⁶ Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. III, Ե., 1957, էջ 710:

Bild – Bilder, Land – Länder, բայց նաև՝ շվեդ. bi – bin, häfte «տեսր» – häften, հոլ. boek – bgeken, boom «ծառ» – bgmen, dag – dngen, qերս. Arbeit –arbeiten, Eiche «կաղնի» – Eichen, հ.անգլ. guma «մարդ» – guman, nama – naman, ēage – ēagan, ն.անգլ. ox – oxen, կրկնակի հոգնակերտով՝ հոլ. ei – éieren, kind – kínderen, lam – lámmeren (er + en), հ.անգլ. cild – cildru, lamb – lambbru, ն.անգլ. child – children, brother – brethren: Այս մասնիկը հայտնվում է նաև սանսկրիտում՝ որոշ գոյականների հոգնակի կազմության մեջ՝ vāri «ջուր» – vārini, manas «միտք» – manānsi, nāma – երկակի թ. nāmnī – nāmānī «անուն»: Սանսկրիտում և հին անգլերենում այս գոյականների հոլովման հարացույցից երևում է, որ –n- մասնիկն այստեղ ոչ թե ավելացել է, այլ ուղղակի վերականգնվել:

Հոգնակերտ մասնիկները լեզվի պատմական զարգացման ընթացքում կարող են քերականական իմաստը փոխել: Գրեթե բոլոր հոգնակերտ մասնիկները հայերենում և նրա բարբառներում ժամանակի ընթացքում սկսել են ընկալվել նաև իբրև հավաքական հոգնակի, օրինակ՝ արմտի, փորոտի, ոսկրոտի, ավազանի, նամականի, այգեստան, բերդեան, վանեար և այլն⁷: Հայտնի է, որ գրաբարյան հոգնակերտ կազմիչների քերականական իմաստը շատ դեպքերում մթագնել է, որի պատճառով աշխարհագրորում որոշ գոյականներ ձեռք են բերել հոգնակիի ևս մեկ վերջավորություն (ակունք – ակունքներ, փորո-տի – փորոտիք, ծակոտի – ծակոտիներ): Գրաբարյան հոգնակերտ մասնիկներ ունեցող որոշ գոյականներ այժմ ընկալվում են որպես վերացական գոյականներ՝ տարերք, բարձունք, տուրք, չարիք, ար-դյունք: Միևնույն երևույթը կա նաև այլ լեզուներում: Երբեմն մի լեզվում որպես հոգնակերտ հանդես եկող քերականական կազմիչը մի այլ լեզվում ընկալվում է իբրև գոյականակերտ ածանց կամ ընդհանրապես արմատից անջատ չի ընկալվում, այսինքն՝ թաքնված է:

Հայերենի հոգնակերտ մասնիկները համեմատելի են թվում բազմաթիվ լեզուներում գտնված համապատասխան կազմիչների հետ: Ընդ որում, բացառիկ կարևորություն ունեն հայերենի բարբառային տվյալները:

Անհրաժեշտ է հաշվի առնել լեզվից լեզու, ինչպես նաև մեկ լեզվի զարգացման տարբեր փուլերում կատարված քերականական կազմիչների իմաստափոխությունը, որը պատմական փաստ է (հոգնա- կի > հավաքական հոգնակի > վերացական գոյական): Բացի այդ, լեզուների համեմատական քննությունը ցույց է տվել, որ ըստ արտասանության տեղի (շրթնային, ատամնային, հետնալեզվային) նույնական արմատները պետք է համարել միևնույն արմատի տարբերակներ կամ փոփոխականեր⁸: Նույնը վերաբերում է քերականական կազմիչներին:

Հայերենի ե-ար/-եր/-ար/-իր և –եան/-ան/-անի/-նի վերջավորություն-ներին նման հոգնակերտ մասնիկներ կան, ինչպես նշեցինք, գերմանական լեզուներում: Հայերենի –ք հոգնակերտի համարժեքը չկա հ.-է. լեզուներում:

⁷ Ջախուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, Ե., 1972, էջ 171-172:

⁸ Мельничук А. С. О всеобщем родстве языков мира (ВЯ, 1991, N 2, с. 28-29).

Մակայն այն գտնվում է ինչպես ուրալյան լեզվաընտանիքի երկու ճյուղերում, այնպես էլ դրավիդյան, էսկիմոս-ալեուտյան, յուկագիր և բասկերեն լեզուներում⁹: Պատմահամեմատական ֆիննաուգրագիտության մեջ նախալեզվից եկող հոգնակիի մի շարք ցուցիչներից մեկը *-k կազմիչն է: Մյուս ցուցիչներն են՝ *-t, *-j (*-i), *(-n): -K հոգնակերտը հատուկ է հունգարերենին և սաամերենին, որը ֆ.-ուգր. լեզուների շարքում առանձին ճյուղ է համարվում: Այս կազմիչը հանդես է գալիս ոչ միայն իբրև գոյականի հոգնակի, այլև ստացական հոդի հոգնակիում՝ հունգ. hal-un-k «մեր ձուկը», դերանուններում՝ ő-k «նրանք», eze-k «սրանք», բայերի խոնարհման մեջ՝ ettünk «ուտում էինք», mentünk «գնում էինք», (պայմ.) lennének «լինեինք», jönne «կգայինք»: Որոշ ֆ.-ուգր. լեզուներում -k/g (խանտերեն, մանսերեն) հոգնակերտը երկակի թվի վերջավորությունն է՝ մանս. нэ – нэг «2 կին», ойка – ойкаг «2 ծերունի», үс – үсүг «2 քաղաք», նան՝ -γ, -iy: pūt-iy «երկու կաթսա», ērəy «երգ» – ēryiy «երկու երգ», խանտ. -kən, -γən, -դən: ku-γən «երկու տղամարդ», kat-kn «երկու ձեռք», ewi – eweդən «երկու աղջիկ», xot – xotդən «երկու տուն», täxa – täxajդən «երկու տեղ», ինչպես նաև սամոդիական ճյուղին պատկանող լեզուներում, օրինակ՝ նենեցերենում. -XA?: xäsawa-xa? «երկու տղամարդ»¹⁰: Այս կազմիչը կա նաև սաամերենում, որը ֆ.-ուգր. ճյուղի մեջ բավականին առանձնացած դիրք է գրավում. guole-k «ձկներ», mana-k «երեխաներ»:

-K հոգնակերտը ֆիններենում եղել է, սակայն չի պահպանվել կամ պահպանվել է կոկորդային շնչի տեսքով՝ me(ʔ) < *mek «մենք», te(ʔ) < *tek «դուք» (հմմտ. հայ. մեք, դուք, բայթյան ճյուղի այլ լեզուներում՝ լիվ. mēg, tēg), näemme < *näem-mek < *näen-mek «տեսնում ենք», näette < *näet-tek < näen-tek «տեսնում էք», talomme – < *talon-mek «մեր տունը», talonne < *talon-dek «ձեր տունը»¹¹: Ֆիննաուգրագետները գտնում են, որ ստացական հոդի հին ձևերը ժամանակին ճշտիվ համապատասխանում էին անձնական դերանուններին, հետևաբար առաջացել են դրանցից՝ kirjamme < *kirjanmek «մեր գիրքը», kirjanne < *kirjandek (t>d) «ձեր գիրքը», mek, tek (հմմտ. հայ. մեք, դուք):

Ս. Բուրրիխը նույնպես կարծում է, որ ստացական հոդերը ինչ-որ ժամանակ լիովին համընկել են անձնական դերանունների հետ¹²: Անձնական դերանվան հնչյունափոխությունը ներկայացվում է հետևյալ կերպ՝ *mekä > mek > me, *tekä > tek > te:

Հունգարերենում հոգնակի թիվը կազմվում է – k վերջավորությամբ, եթե բառը վերջանում է ձայնավորով, և – ok, – ek, – Фk վերջավորություններով, եթե բառը բաղաձայնով է ավարտվում: Ձայնավորների հերթագայությունը բացատրվում է ֆ.-ուգր. լեզուներին բնորոշ ներդաշնակության օրենքով, օրինակ՝ ez «այս» – ezek «սրանք», az «այդ, այն» – azok «դրանք, նրանք», kert

⁹ Trombetti A. L'unità d'origine del linguaggio, Bologna, 1962, p. 126-127.

¹⁰ Хайду П. Уральские языки и народы, М., 1985, с. 310.

¹¹ Хакулинен Л. Развитие и структура финского языка, М., 1953, с. 82.

¹² Буррих А. В. Историческая морфология финского языка, Л., 1955, с. 36.

«այգի» – kertek «այգիներ», fal «պատ» – falak «պատեր», ajto «դուռ» – ajtgk «դռներ», anya «մայր» – anyak «մայրեր»:

Ըստ Բ. Ա. Սերեբրեննիկովի, *k*-ն գալիս է նախաֆ.-ուգր. կամ նույնիսկ նախաուրալյան շրջանից, քանի որ այն տարածված է նաև սամոդիական լեզուներում¹³:

Ավանդական ֆիննաուգրագիտության մեջ տարածված է նաև այն կարծիքը, թե *-k* կազմիչը առաջացել է ֆ.-ու. լեզուներին առավել բնորոշ *-t* հոգնակերտ կազմիչից: Սակայն ոչ բոլոր լեզվաբաններն են ընդունում այս տեսակետը: Ա. Կյուննապը *t > k* անցման ճանապարհով նոր հոգնակերտի առաջացումն անվանում է հնչյունաբանական-պատմական անհերթելիություն (phonetic-historical nonsense)¹⁴:

Մորդովիներենում *-k*-ն գոյականի հոգնակի թվի ցուցիչ չէ, սակայն իբրև այդպիսին ի հայտ է գալիս դիմավոր-ստացական կազմիչներում և բայի խոնարհման վերջավորություններում՝ *кудом* «տունս» – *кудонок* «մեր տունը, մեր տները», *кудот* «տունը» – *кудонк* «ձեր տունը, ձեր տները», *морынь* «ես երգում էի» – *морынек* «մենք երգում էինք»¹⁵:

Հ.-է. և ֆ.-ուգր. լեզուներում կան հայերենի հետ այսպիսի զուգադիպումներ՝ լատ. *sarcio*, *īre* «սարքել, նորոգել, բուժել» – հայ. *սարք*, *անգլ.* *hawк* «բազե» – հայ. *հավք*, շվեդ. *värk* «ցավ», դան. *verk*, իսլ. *verkja* «ցավել» – հայ. *վերք*, դան. *busk* «թուփ» – հայ. *բոյսք*, անգլ. *ask* «հարցնել» – հայ. *ասք*, մար. *йӕнт* «հոգի», էստ. *hing*, ֆինն. *henki* «կյանք, հոգի» – հայ. *կեանք*, ֆինն. *kylki*, էստ. *kälg* «կողք» – հայ. *կողք*, էստ. *kirg* «կիրք» – հայ. *կիրք*, ֆինն. *sarka* «(հողի) շերտ», *sarake* «սյունակ» – հայ. *շարք*, ֆինն. *käskeä*, էստ. *käskima* «հրամայել», ֆինն. *käskey* «հրաման», էստ. *käsk* «հրաման, պատվիրան» – հայ. *խօսք*, ֆինն. *kulkea* «քայլել», *kulku*, էստ. *kulg* «շարժում, ընթացք», ֆինն. *kulkuri* «շրջմուխ» – հայ. *քայլք*, ֆինն. էստ. *keskus* «կենտրոն» – հայ. *կէսք*, էստ. *hankima* «արդյունահանել» – հայ. *հանք*: Ենթադրում ենք, որ այս բառերում *-p* հոգնակերտի նախնական իմաստը մթազնած է, այսինքն՝ հայերենից բացի, ոչ մի լեզվում այս բառերում *k*-ն այլևս քերականական արժեք չունի: Այս օրինակները ևս վկայում են, որ *k* հոգնակերտը շատ հին է:

Հայերենի *-տի* հոգնակերտին համարժեք պետք է համարել ֆ.-ուգր. *մի* շարք լեզուների հոգնակիի վերջավորությունը՝ ֆինն. *-t* (*kieli* «լեզու» – *kielet* «լեզուներ», *vesi* «ջուր» – *vedet*, *hirsi* «գերան» – *hirret*, *kala* «ձուկ» – *kalat*, *talo* «տուն» – *talot*), էստ. *-d* (*maja* – *majad*, *sein* – *seined*, *saar* «կղզի» – *saared*), մորդովիներենի 2 բարբառներում՝ *-т*, *-ть*, (էրզ. *панго* «սունկ» – *пангт*, *пеште* «ընկույզ» – *пешттъ*, *иш* «օր» – *шит*, *марь* «խնձոր» – *марьхть*, *куд* «տուն» –

¹³ Серебренников Б. А. Историческая морфология мордовских языков, М., 1967, с. 154.

¹⁴ Künnap A. Possible Language Shifts in the Uralic Language Group, University of Tartu, 2000 [http://www.ut.ee/Ural/kynnap/kpls.html].

¹⁵ Основы финноугорского языкознания. Вопросы происхождения и развития финноугорских языков, М., 1974, с. 231.

кутт, тев «գործ» – тефт, кал «ձուկ» – калхт, ломань «մարդ» – ломатть), մանսերենում –t (нэ «կին» – нэт, ойка «ծերունի» – ойкат, ērəy «երգ» – ēryət), խանտ. ewi «աղջիկ», – ewet, xot «տուն» – xotət, tǝxa «տեղ» – tǝxajət, որոնց հիման վրա լեզվաբանները վերականգնում են նախաֆիննաուգրական *–t հոգնակերտը¹⁶: Ըստ Տրոմբետիի հավաքած տվյալների, այս հոգնակերտը –t, –d ձևով գտնվում է սամոյեդական, էսկիմոս-ալեուտյան, յուկագիր, մանջուրերեն և սեմական լեզուներում: Այս կազմիչը այնքան մեծ տարածում ունի աշխարհի լեզուներում, որ Տրոմբետին հ. –ե. –s հոգնակերտը համարում է –t հոգնակերտից առաջացած (թեպետ s-ն տիպաբանորեն կարող էր առաջանալ նաև k>s, r>s հնչյունափոխությամբ)¹⁷: Տրոմբետին նշում է նաև այս հոգնակերտի վերացական – հավաքական գործածություն: Այս հոգնակերտի գործածության օրինակներ կան ռուսերենում՝ ребята, цыплята, маслята, котята, щенята: Ենթադրում ենք, որ նախապես հոգնակիի իմաստ է ունեցել նաև –ота վերջավորությունը՝ ворота, пехота: Ըստ Վ. Իլիչ-Սվիտչի, ատամնային պայթականով հոգնակերտ մասնիկներ կան արաբյան, ուրալյան, քարթվելական և սեմաքամյան, բայց ոչ հ. –ե. լեզուներում¹⁸:

Հայերենի –ուի(>վի) հոգնակերտի (աչուի և այլն) համարժեքը կարելի է համարել բուլղարերենի որոշ գոյականների հոգնակի թվի կազմությունը՝ сняг – снегове, грях – грехове, бряг – брегве: Հավանաբար, ռուսերենի буква, братва, ботва, листва, детва, молва, кружева, паства, жертва, почва տիպի բառերում –ва մասնիկը նախապես հոգնակերտ է եղել:

Այս հոգնակերտի մեկ այլ տարբերակն է վրացերենի ები [էբի] կազմիչը՝ (თვალი [թվալի] «աչք» –თვალ-ები [թվალ-էբի], წიგნი [ծիգնի] «գիրք» – წიგნ-ები [ծիգն-էբի]) և վերացական գոյական կազմող ება [էբա], ობა [օբա] ածանցը՝ ბუნება [բունեբա] «բնություն», მცობა [մենոբա] «շենք»: Վերացական գոյականների նմանատիպ կազմիչներ ենք գտնում սլավոնական և մերձբալթյան լեզուներում՝ ռուս. городѣба, жалоба, мольба, худоба, ლათიზ. bagātība «հարստություն», jaunība «երիտասարդություն», taisnība «ճշմարտություն», veselība «առողջություն»: Տրոմբետին համեմատել է վրացերենի այս ածանցով կազմված վերացական գոյականները՝ šen-o-ba «շենք», šav-o-ba «սևություն», did-o-ba «մեծություն», նույնիսկ անորոշ դերբայը՝ šen-e-ba «կառուցել», šav-e-ba «սևանալ» ռուսերենի злоба և այլ նման բառերի հետ¹⁹:

Ֆիններենում –ue (–ye) կազմիչն ունի հավաքական իմաստ՝ laiva «նավ» – laivue «նավատորմ», joukko «ամբոխ» – joukkue «խումբ, ջոկատ», poika «որդի» – poikue «ձագերի խումբ»: Կարելերենում գտնում ենք հավաքական իմաստ արտահայտող –oveh/-öveh կազմիչը՝ poiga «թռչունի ձուկ» – poigoveh «ձուների խումբ», käl'ä «գլուղ» – kül'öveh «համագլուղացիներ»:

¹⁶ Նույն տեղում, էջ 221:

¹⁷ Trombetti, A. L'unità d'origine del linguaggio, Bologna, 1962, p. 125.

¹⁸ Илич - Свитыч В. М., նշվ. աշխ., հ. 1, էջ 13:

¹⁹ Trombetti A., նշվ. աշխ., էջ 111:

Ենթադրում ենք, որ քերականական կազմիչների, տվյալ դեպքում հոգնակերտ մասնիկների քերականական իմաստի փոփոխությունը լեզուների մեջ օրինաչափ երևույթ է և ոչ բացառություն: Որոշ ուսումնասիրողներ, ինչպես, օրինակ, Բ. Սերեբրեննիկովը, կարծում են՝ հավաքական նշանակություն ունեցող ածանցներն են, որ հետագայում վերածվել են հոգնակերտ ածանցների²⁰: Կարող էր նաև հակառակը տեղի ունենալ:

Քերականական իմաստի փոփոխության կամ **քերականական տեղաշարժի** օրինակ է հայերենի –ուտ ածանցը կաղնուտ, մորուտ, ճահճուտ, եղեգնուտ և նման այլ բառերում, որտեղ հոգնակերտ մասնիկը ձեռք է բերել վերացական նշանակություն: Նույն ձևով՝ մարիերեն кож «եղնի» – кожер «եղնուտ», որտեղ –ер վերջավորությունը, հավանաբար, հնում հոգնակի իմաստ է ունեցել:

Պերմյան լեզուների հոգնակի վերջավորություններն են՝ ուղւ. –uc (–йoc), կոմի-զ. –яс (–йoc), –oc, կոմի-ւ. –ez (йэз), муртъус// мортъяс// мортэз «մարդիկ»: Այս հոգնակերտը հայերենի հոգնակերտ կազմիչների հետ առնչություն չունի, թերևս, նման է միայն հ.-է. –s հոգնակերտ կազմիչին: Կարծիք կա, սակայն, որ պերմյան –йoc/ –йас/ –йэз հոգնակերտը առաջացել է «ժողովուրդ, մարդիկ» բառից²¹: Կոմիում հանդիպում է նաև –ян (–йан) հոգնակերտը՝ пи «որդի» – пиян «որդիներ»: Որոշ լեզվաբաններ գտնում են, որ կոմի լեզվի –йан հոգնակերտը առաջացել է հավաքական –я մասնիկից՝ ավելացրած –н հոգնակերտը՝ կոմի-ւ. көзъя «եղնուտ» – көз «եղնի», вörъя «անտառոտ վայր» – вör «անտառ»: Սակայն առավել հավանական է հոգնակիից հավաքականի առաջացումը և –ян (–йан) վերջավորությունից н հնչյունի անկումը:

Ֆիննաուգրագետները գտնում են, որ –n հոգնակերտը գոյություն է ունեցել նաև ֆիններենում: Որպես վկայություն բերվում է tāmä «այս», tuo «այդ», se «այն» ցուցական դերանունների հոգնակին՝ nŋmŋ, nuo, ne²²: Այս հոգնակերտի հետքերը հայտնաբերվում են նաև դիմորոշ հողի՝ վերացած շարքում, նախաֆինն.՝ *kirja-n-mek «մեր գրքերը», *kirja-n-tek «ձեր գրքերը», որտեղ –n-ն հոգնակի թվի ցուցիչ է եղել²³:

²⁰ Серебренников Б. А. Историческая морфология пермских языков, М., 1963, с. 84.

²¹ Основы финноугорского языкознания. Марийский, пермские и угорские языки, М., 1976, с. 143.

²² Хакулинен Л., նշվ. աշխ., էջ 82:

²³ Նույն տեղում, էջ 96, Хайду П., նշվ. աշխ., էջ 310:

Ֆ.-ուգր. լեզուներում հոգնակերտ կազմիչների բազմազանությունը համարվում է հնուց եկող երևույթ: Լ. Հակովինենը նշում է, որ ժամանակակից ֆ.-ուգր. լեզուներում «հոգնակիի կազմության հարաբերական պարզությունը լեզվի զարգացման ընթացքում երկարատև համահարթեցման հետևանք է»²⁴:

Վերոբերյալ վերլուծությունը թույլ է տալիս որոշակի եզրահանգումներ կատարել:

Համեմատական լեզվաբանության զարգացման նախնական փուլերում ոչ միայն հնդեվրոպաբանության, այլև ֆիննաուգրագիտության մեջ նախաձևերի վերականգնման համար ընդունված է եղել արմատից «միջին թվաբանական» հանելու մեթոդը: Տարբեր լեզվաընտանիքների բառային և քերականական նյութով աշխատելիս լեզվաբանները միջին թվաբանական էին հանում մինչև անգամ քերականական կազմիչներից:

Հոգնակերտ կազմիչների քննությունը ցույց է տալիս, որ դրանք պետք է ուսումնասիրել ամբողջության մեջ և ոչ թե առանձին-առանձին: Կարծում ենք՝ ֆ.-ուգր. լեզուներում առկա *-k*, *-t*, *-i* (*-j*), *-n*, նաև խիստ սահմանափակ կիրառություն ունեցող *-s*, *-ue* հոգնակերտ կազմիչները պետք է դնել հայերենի *-ք*, *-տի*, *-ան*, *-ուի* (*>-վի*) և նրանց համարժեք *h.-ե.* հոգնակերտների դիմաց: Նույն կերպ *h.-ե.* լեզուներում առկա հոգնակի թվի *-er/-ar*, *-en/-an* կազմիչները, ինչպես նաև սլավոնական և մերձբալթյան ճյուղի որոշ լեզուներում հանդիպող որոշ կազմիչներ (*-ята*, *-ота* *-ове/-ве*, *-ва*, *-оба*, *-ѣба*), որոնց մի մասի քերականական իմաստը մթազնաձ է, համադրելի են հայերենի նաև բարբառային ձևերում առկա հոգ-

²⁴ Хакулинен Л., նշվ. աշխ., էջ 83:

նակերտ կազմիչների հետ (–էար/–եր, –էան/–ան/–անի, –տի/–տի, –
նի/–վի): Բնչպես արդեն ցույց են տվել նաստրատիկ լեզվաբանության
տվյալները, այս կազմիչները ընդհանուր են վի քանի, այդ թվում՝ հ.-է. լեզվա-
բնականիքի համար, որը նրանց հնության ապացույցն է:

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ПОКАЗАТЕЛЕЙ МНОЖЕСТВЕННОГО ЧИСЛА В АРМЯНСКОМ И ИНЫХ ИНДОЕВРОПЕЙСКИХ И ФИННОУГОРСКИХ ЯЗЫКАХ

НИКОГОСЯН Г. В.

Резюме

Сравнительный анализ показателей множественного числа в армянском, других индоевропейских и некоторых финноугорских языках явствует о том, что одни и те же показатели множественного числа имеются как в индоевропейских, так и в финноугорских языках. Их основное отличие заключается лишь в степени распространенности данного показателя в языковой семье. По-видимому, причиной несоответствия между показателями множественного числа в разных языках является грамматический сдвиг.

Показатели множественного числа –k, –t, –i (–j), –n (а также –s, –ue) в финноугорских языках этимологически параллельны армянским формантам –p, –տի, –ան, –նի (>–վի), а индоевропейские форманты –er/–ar, –en/–an (а также славянские и балтийские –ята, –ота–ове/–ве, –ва, –оба, –ība) можно отнести к армянским формантам – էար/–եր, –էան/–ան/–անի, –տի/–նի, –նի/–վի:

Примечательно, что почти все показатели множественного числа имеют параллели в диалектах армянского языка, что свидетельствует об исключительной архаичности этих диалектных форм.